

« Gallia » երգչախումբին ղեկավարու-
թիւնը կ'ստանանէ: Լ. Ռիլէի «Ին ֆեր օ
Լուվր»-ն՝ Օֆիսիէ տ'Ազատեմի տիտղոսին
կ'արժանացնէ զինք: Է. Մանաս քանիցս
կը վարէ նաեւ գործիական նուագահան-
դէսներ, ի մէջ այլոց՝ Հայ Երիտասարդա-
կան Միութեան «Քնար» խումբի մասնակ-
ցութեամբ Ազգ. Հիւանդանոցի ի նպաստ
սարքուածը. հոգ էր որ կը նուագուի երկ-
ձեռն դաշնակի համար հեղինակած իր An-
dante Symphonique (հրտ. Գոման-
տինկէր) որ քառաձեռն դաշնակի համար
ալ հրատարակուած է: Մեծ նուագախում-
բի համար գրուած այս կտորը կը միտի
քնարերգական զգացումներ արտայայտելու
ան նուագուած է նաեւ Ֆլոռօսի ղեկա-
վարած Պոլսոյ «Օռքեսդը Ֆիլառմօնիք»-ի
Լ նուագահանդէսին, արժանանալով ան-
վերջ ծափերու: — Ունի «քառաձայն պա-
տարագ» մըն ալ, Հայ Եկեղեցւոյ եղանակ-
ներուն վրայ ձեւուած և 1910-1 բազ-
միցս երգուած:

Այնուհետեւ Մանաս բաւական ատեն
քաշուած կ'ապրի, արտադրելով նոր գոր-
ծեր: 1918ին, Լայրցիկի հրտ. Պրայդբօրդ
և Հերդէլ մեծ Տունը լոյս կ'ընծայէ անոր՝
երկձեռն դաշնակի համար 1912ին գրած
եռամաս Suite (1. Romance en for-
me de Valse, 2. Chanson Paysan-
ne, 3. Mazurka): Նոյն Տունը 1922ին
հրապարակ կը հանէ անոր Quatuor à
cordes-ը՝ մեծ-ջութակի և թաւ-ջութակի
համար: Ահա թէ ինչպէս կ'արտայայտուի
այս առթիւ երաժշտ. քննադատ Մարգէն
Ֆրիտլան՝ Շուսմանի հիմնադրութեամբ
Լայրցիկ հրատարակուող «Յայդըրիֆո ֆիւր
Մուզիք» հանդէսի 2 Ապր. 1923ի համա-
րով. «Սոյն Գոռադիօնը դասական և նոր
վիպական զգացմանց և երաժշտական գա-
ղափարներու զուգորդեալ մէկ հանգաման-
քին արդիւնքն է. կ'սկսի ֆռէկեղաղով մը՝
որ կերտուած է կշռոյթով և աւելնով առի-
քներգի (thème) մը վրայ. յետոյ կու գայ
ներոյժ ու սեղմ շեշտ մը՝ որուն մէջ լեկո
գանդապիլի (յուշիկ հեշտանուագ) շարժու-
մը տեղը կը բռնէ աւանդական դիօնի (ե-

ռանուագ): Գ. կտորը «Լիտ» վերտառու-
թեամբ կարճ ատաձիօ (յամբանուագ) մըն
է՝ մեղեդիական ընդարձակ պարբերութիւն-
ներով, իսկ ֆիւնալը (վերջանուագ) մոլեգին:
Լաւ ու վայելուչ այս գործը գերծ է ա-
մէն բեկբեկանքէ. և թէեւ անոր մէջ չենք
հանդիպիր արդիականներու փնտռած քիչ
մը չափազանցեալ նորութեանց, բայց կը
գտնենք երաժիշտ մը որ հմուտ է քուս-
տիօնի ձեւին և որ գիտէ բներգային երկեր
լաւագոյնս յօրինել »:

1920-1ին, Մանաս երգագրեց Վ. Թա-
թուլի 2 քերթուածները (Զուր մը ծարաւ
անցորդին — Խմենք) դաշնակով ընկերա-
նալի: Ներկայիս՝ պատրաստելու վրայ է
Poème des Iles-ը նուագախումբի համար:

6 Մայիս 1921ին, Մանաս իր գոր-
ծերուն յատկացուած նուագահանդէս մը
սարքեց Իւնիօն Ֆրանսէզի մէջ՝ ուր իր
«Քուադրիլօն»-ը նուագուեցաւ Նոյն տարին,
«Արուեստասէր» Երաժշտ. Միութիւնը
հրաւիրեց զինք աւանդելու խաղերգումի
և դաշնաւորումի դասեր, որոնք Լասեանի
մէջ տեղի ունեցան ու տեւեցին 1¹/₂ տարի:
Հասցուցած սաներէն յիշենք Արայ Պար-
թեանը որ այժմ յաճախող է Փարիզի
Երաժշտանոցին:

Այս գործերն ու ասոնց մասին Արուես-
տի մարդոց գնահատականը իր վրայ հրա-
ւիրեցին Պոլսոյ «Տար-իւլ-Էնամ»-ի տնօ-
րէն Մուսա Սիւրէեա Պէյի ուշադրութիւնը.
նոյն Երաժշտանոցին մէջ՝ Մանաս կը շա-
րունակէ իգական երգչախումբի և նուագա-
խումբի ղեկավարութիւնը, նաեւ դաշնա-
ւորումի դասաւանդութիւնը:

* * * Խօսքն իրեն տանք հիմա. «Ընդհան-
րապէս կամաց կ'աշխատիմ. ցարդ արտա-
դրածներս քիչ են, այլ խնամեալ: Գեղար-
ուեստական հակումներս որոշակի կը մղեն
զիս դէպ արդիականութիւն. անոնցմէ եմ
որոնք կը տենչան այդ ուղղութեամբ կա-
տարել երաժշտական բարեշրջումը, տե-
սողութենէ չվրիպեցնելով, սակայն, դա-
սական յօրինուածքը. բարեշրջում որ կա-
տարուելու վրայ է արդէն »:

(«Ամէնուն տարեցոյցը», 1926, էջ 492-4) Թ. ՈՒՊԻ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ք

Դ Ա Ն Ի Է Լ Վ Ա Ր Ո Ի Ժ Ա Ն Ի Մ Է Ջ

Ա. ԲԱՋՄԱԼԱՐ ՏԱԻԻՂ

Ամբողջ գրականութիւն մը կայ Դանիէլ
Վարուժանի կեանքին ու գործին շուրջ:
Զմայլելի գանձը զոր ժառանգ ձգեց
ան հայ քերթողութեան՝ չէր կրնար չըս-
տեղծել հիացողներու ամբողջ բանակ մը,
ու իր հմայքին տակ չպահել ամբողջ շըր-
ջան մը:

Շատ քիչ քերթողներ հայ գրականու-
թեան մէջ այնքան ազդած են իրենց օրե-
րուն վրայ՝ որքան Վարուժան: Շատեր
հետք են թողած իրենց ապրած շրջանէն
յետոյ՝ խանդավառելով իրենցմէ ետք եկող
սերունդը: Ուրիշներ դարեր յետոյ յայտ-
նած են իրենց հրապոյրը՝ ոգեւորութիւն
մը բռնկեցնելով յանկարծ: Վարուժանի
ուժը աւելի հզօր եղաւ իր ժամանակակից-
ներուն վրայ:

Վարուժան արդարեւ հայ գրականու-
թեան մէջ յայտնուեցաւ բոցի մը պէս:
Հազիւ տասը տարի ունեցաւ իր սիրտը
պոռթկալու համար. բայց այնքան ուժեղ
հնչեց իր երգը՝ որ իր շունչը դրոշմեց
իր ապրած շրջանին վրայ: Սիւսմանութիւն
հետ մէկտեղ ան իշխեց ամբողջ տասնա-
մեակ մը, թոյլ չտալով որ զլուխ ցցեն
միջակութիւնները: Ան խամրեցուց ինչ որ
իր շուրջը կար վտիտ և ազագուն: Նոյն
իսկ պահ մը մթազնեց իսկական գեղեց-
կութիւնները որ շողացեր էին իրմէ քիչ
առաջ: Պահ մը մոռցուց Մեծարենցն ան-
գամ, մինչեւ որ տարիները դարձեալ ա-
ռաջին գիծը բերին Ծիածանի և Նոր տա-
ղերու զմայլելի քերթողը:

Քսան տարիները որ անցան իր եղե-
րական վախճանէն յետոյ՝ շատ բան խամ-

րեցուցին անշուշտ առաջին օրերու իր
հմայքէն: Ժամանակը անողոր է շատ. կը
չքայնէ շատ բան քերթողի մը երկէն:
Ինչ որ կը մնայ բանաստեղծի մը ստեղ-
ծագործութենէն՝ մարդկային տարրն է, այն
որ անկախ է ժամանակին ու միջավայրին
կաշկանդիչ լուծէն, ու կրնայ հոգիէ հոգի
անցնիլ, սերունդէ սերունդ:

Վարուժանի քերթողական վաստակին
մէջ ալ յուսով է տիեզերական այդ տար-
րը. բոլոր այն յուզումներուն մէջ զորս
հայ ժողովուրդը իր ներշնչումներուն խառ-
նեց՝ կայ տարր մը որ ժամանակին պիտի
դիմանայ: Եթէ տարիները պիտի մոռցնեն
հետադարձական տարրը՝ զոր իր ժամանակը
հարկադրեց իր քնարին, շատ բան պիտի
փրկուի սակայն:

Շնորհիւ իր մարդկային յուզումներուն,
ու պերճաշուք արուեստին որով պոռթկաց
այդ յուզումները:

Բայց ինչ որ ամէնէն աւելի անկորնչելի
պիտի մնայ իր արուեստի յատկանիշերուն
մէջ՝ պէսպիսուն լարերն են իր քնարին վրայ:
Բազմակողմանի է իր քերթողութիւնը: Մէկ
տարիէն միւսը նոր կայծ մը կը սպրդի իր
հոգիին մէջ, ու մէկ հատորէն միւսը նոր
քերթող մը կը յայտնուի: Իր շքեղ լեզուն
է միայն միութեան գիծը իր հոգիին յա-
ջորդական փուլերուն միջեւ, ու ներշնչ-
ման բոցը որ կը սողոսկի բոլորին մէջէն:

Ինքն իսկ կը զգայ իր հոգիին այդ մըշ-
տական դիմայեղումները, երբ 1914 Մարտ
26ին Պոլսէն Վարդգէս Ահարոնեանի գրած
իր մտերմական մէկ նամակին մէջ կ'ըսէ.

« Հաճելի է ինծի միշտ լարերս փոխել

և վերանորոգուիլ արուեստի մէջ և եթէ մուսանները չլքեն զիս՝ դեռ պիտի կարենամ շուտեցնել!! Իմ կարգ մը ակնոցաւոր քննադատները, որոնք արուեստի գործ մը, բանաստեղծութիւն մը կը քննասիրեն որոշ սկզբունքներու ուղղութեամբ, որ իրենցն է, իւրաքանչիւրին առանձնապէս¹»:

Այնպէս որ երբ Վարուժանի քերթողական երկը կը զննենք այսօր՝ բազմաթիւ քերթողներու կը հանդիպինք որոնք եկեր են իրենց սիրտը պարպել հոն: Պատանի բանաստեղծի մը դողդոջուն հեւքն է որ կը թրթռայ Սարաուսներուն մէջ (1906), այնքան միամիտ, այնքան սրափուն, որ ապշահար կը մնաս երբ յանկարծ դէմէ կ'ելլէ մրրկավարս, հրաչուի քերթողը որ Յեղին սիրտը (1910) կը պոթիկայ անոր չարչարանքին, յոյսերուն ու մաքառումներուն մէջ, ու քիչ յետոյ «Հերանու Երգեր»-ու (1913) անգուգական երգիչը որ մարդկային հոգին կը պատմէ, ու տառապանքին ու հաճոյքին գեղեցկութիւնը, և ի վերջոյ զմայլելի աշուղը որ Հացին Երգը պիտի երգէր, խաղաղութիւնը հոգին ու սրբազան քրտինքը:

Ու իր տաղանդին բոլոր գիծերը կը բխին տարբեր ակէ մը: Ամէն մէկ քերթող, Վարուժանի մէջ, տարբեր հոգէ մը աւել կը ծծէ, ու տարբեր երկինքէ մը ներշնչում: Գաւառէն եկող մանուկը որ Պոլսոյ մէջ աչքերը պիտի բանար ու Վեներտիկի մէջ պիտի թրծուէր, որպէսզի յետոյ Եւրոպան ճանչնար իր մրուրին մէջ ու խաղաղութիւնը դարձեալ երթար փրնտուն հայրենի երգիքին տակ, իր քերթողական երկին մէջէն կը քալէ՝ իր ճամբուն յաջորդական գեղեցկութիւնները ծծած:

Մխիթարեանք աղուոր կայք մըն են այդ ճամբուն վրայ:

Ինչ աւելի գեղեցիկ առիթ մատնանշելու համար Մխիթարեանց դերը Դանիէլ Վարուժանի գործին մէջ՝ քան հարիւրամեակի տօնը կը թակաւն յարկի մը, ուր իր հոգին թրծեց պատանի Վարուժանը:

Բ. ԱՐՈՒԵՍ ՈՒ ՇՐՋԱՊԱՍ

Ո՛րքան մեղան հոսեցուցած է շրջապատի ազդեցութեան հարցը: Ո՛րքան թերուդէմ թէզեր, արուեստներու զարգացումը վերլուծած ատեն, արուեստը շրջապատող ամէն մէկ ազդակի արժէքին ու դերին մասին:

Կան որ արուեստները անկախ կ'ընդունին իրենց շուրջի կեանքէն՝ հաւատարմութեամբ որ արուեստը ինքն է որ կ'ազդէ կեանքին վրայ: Ուրիշներ շրջապատին գերին կը հռչակեն արուեստը՝ ուրանալով արուեստագէտին իր դերը: Ու կան «միջին-ճամբան» դաւանողները, անոնք որ կ'ընդունին միջավայրին ու արուեստագէտին փոխադարձ ազդեցութիւնը:

Բայց ինչքան ալ տեղը չըլլար հոս այդ հակընդդէմ տեսակէտներուն վերլուծումն ընել, սխալ պիտի ըլլար ուրանալ միջավայրին ու շրջապատին ազդեցութիւնը արուեստագէտներու կազմութեան վրայ:

Բացառիկ հանճարները, ճիշտ է, իրենք է որ կը յեղաշրջեն յաճախ իրենց միջավայրն ու շրջապատը՝ իրենց հոգիին կնիքը հարկադրելով իրենց ժամանակակիցներուն: Բայց անոնց հոգին ինքն իսկ կազմուած է իրենց շուրջի իրերուն հպումով, առօրեայ բարքերը, օրուան քաղաքակրթութիւնը, մարդոց բարբառը՝ ազդակներ են որոնց մէջ ստիպուած է հանճարի մարդուն միտքը հասուննալ՝ իր դրոշմը իր շրջանին վրայ դնելէ առաջ:

Հանճարները եթէ զարտուղութիւն նկատենք իսկ իրենց հոգեկան թափին ու գնութեանը ու միջավայրին հետ կոտակու իրենց ուժին համար, տաղանդները, — այսինքն արուեստագէտները զորս տրուած է մեզ ունենալ, — ամէն օր ստիպուած են շփուիլ կեանքին հետ, ապրիլ իրենց շուրջի մարդոց յուզումները, իրենց հոգին խառնել անոնց իղձերուն և յոյսերուն, զգալ անոնց զրկանքն ու ճիգը, մէկ խօսքով իրենց շնչած մթնոլորտէն բան մը խառնել իրենց ներշնչումներուն, ճգնելով հանդերձ իրենց հոգիին սեփական դրոշմը պահել անոնց վրայ:

Վարուժան չէր կրնար բացառութիւն կազմել: Որքան ալ ուժեղ ըլլար իր բնածին տաղանդը՝ ան պիտի չկարենար խուսափիլ իր շուրջի կեանքին հպումէն, ու ազդեցութիւններէն զորս պիտի գտնէր իր ճամբուն վրայ: Անոր հոգին եռեւեփող կաթսայ մըն էր ուր ամէն ածուէ ծաղիկ մը կ'իյնար:

Դէպքերը բերին որ հազիւ 31 տարուան կեանք մը ունենայ բրգնիկցի տաղանդաւոր քերթողը: Ծնած 1884ին, 1896ին է որ Պոլիս կը բերուի Բրգնիկէն, և 1896-1902 կ'աշակերտի Պոլսոյ Մխիթարեաններուն: Իր յաջորդ կայանը Վենետիկն է, միշտ Մխիթարեանց մօտ, 1902-1905: Անկէ յետոյ 1905-1909 ուսանող Կանտի համալսարանը, 1909-1912 ուսուցիչ Եւրոկոյ և Սերաստիոյ մէջ, 1912-1915 տեսուչ Պոլսոյ Լուսաւորչեան ուսումնարանին, և ահա դահիճը կը քշէ զայն սպանդանոց:

Անշուշտ որ տարիները զորս 1905-1915 անցուց Կանտի, Եւրոկոյ, Սերաստիոյ և Պոլսոյ մէջ իր ամէնէն յուռի տարիները եղան: Այդ շրջանին էր որ գրեց իր երեք գեղեցիկ երկերը՝ ամէն մէկը տարբեր արեւի մը ջերմութեամբ օծուն:

Բայց այն 9 տարիները, 1896-1905, որոնք իր մանկութեան ու պատանութեան շրջանն են, և զորս անցուց Մխիթարեանց հովանիին տակ, չէին կրնար դեր չխաղալ իր հոգիին կազմութեան մէջ: Աւելին: Այդ շրջանին էր որ իր հոգին ընդունակ դարձաւ յետագայ գեղեցկութեանց հիւթը ծծելու:

Չըսենք թէ առանց Մխիթարեաններուն հայ գրականութիւնը զրկուած պիտի մնար Վարուժանէ մը. տաղանդը՝ եթէ բնածին է՝ ծիլ կու տայ ուր ալ ըլլայ. կայծը կը բռնկի ուր ալ նետես:

Բայց Վարուժանը՝ ինչպէս որ հասած է մեզ՝ Մխիթարեանց շատ բան կը պարտի:

Նախ մտաւոր և հոգեկան սնունդին համար զոր անոնք ջամբեցին իրեն: Վա-

րուժան՝ իր հայ սրտովը՝ Մխիթարեանց ձեռակերտն է. Մխիթարեանց ձեռնասունն է դարձեալ իր հայ պաշարովը:

Ու յետոյ անոր համար որ Մխիթարեանք իրենց հետքը պահեցին Վարուժանի վրայ՝ բանաստեղծին արբունքի հասնելէն ետքն ալ: Ճիշտ է, կեանքը անընդհատ յեղաշրջեց զայն ու միշտ նոր լարեր աւելցուց անոր քնարին վրայ՝ բայց հին օրերէն միշտ հետք մը պահեց անոր հոգիին մէջ:

Ըսենք աւելի պարզ, — Վարուժան միշտ



Դանիէլ Վարուժան
իր փառքի օրերուն ի Ա. Պոլիս

շնչեց Մխիթարեանց լուծին տակ, այս բացատրութեան ամէնէն ազնիւ իմաստովը, որովհետեւ Ս. Ղազարէն կը սերի իր Հայու տաք սիրտը՝ որ իր բոլոր երկերուն մէջ բարախեց, հայ լեզուն ու հայ պաշարը՝ որոնք կը լայնցնեն իր քերթուածները, ու նաեւ իր արուեստին բիծերը՝ զորս իր քննադատները յեղյեղեցին միշտ:

Հ. Սիմոն Երեմեան, որ Վարուժանի պատանութիւնը ճանչցաւ, ու յետագային վայելեց անոր մտերմութիւնը, ինքն ալ կ'ըսէ.

«Վարուժան իր աշակերտութեան օրերուն մէջ, ինչպէս նաեւ շատ տարիներ անցնելէն վերջը ինծի կ'ըսէր, թէ իր գրելու գեղաքանդակ ոճը և հայերէն լեզուի պերճութիւնը և գեղեցկին ճաշակը կը պարտի Քաղկեդոնի մեր Մխիթարեան Վարժա-

1. «Հայրենիք» ամսագիր. 1926, 3 տետրար.

բանի մեծաւոր Հ. Արիստակէս Վ. Քաս-
բանտիւեանի¹»:

Արդաւր է որ ստուերի մէջ ապրող այս
ազնիւ մարդը գուրգուրանքով յիշուէր
Մուրատ—Ռափայէլեան այս դարադար-
ձին առթիւ, ու ամէն անգամ որ յիշա-
տակուէր Դանիէլ Վարուժանի բերթողա-
կան վաստակը:

Հեղինակը յաճախ ինքն է իր ամէնէն
ճշմարիտ դատաւորը:

Մտերիմ նամակի մը մէջ զոր 1908
Նոյ. 1 ին ուղղած է Թէոդիկին՝ Վարու-
ժան ինքն իսկ կը ճշդէ հանգրուանները
իր կրած ազդեցութիւններուն: Ան կը թուէ
հոգին զոր հայրենի գիւղէն հեռը բերաւ
Պոլիս, Գատըգիւղը՝ որ իր պատանի հո-
գիին առաջին խանձարուրը եղաւ, Վենե-
տիկը՝ որ իր արուեստին երանգապնակը
կազմեց, ու կանտը որ խորացուց իր հո-
գին:

Արդ, բոլոր այս ազդեցութեանց ճամ-
բուն վրայ՝ կը գտնենք Միսիթարեանց
հետքերը:

Գ. ՎԱՐՈՒԺԱՆ ԳԱՏՐԳԻԻՎԻ ՄԷՋ

Դանիէլ Վարուժան անշուշտ որ բա-
նաստեղծ էր ծնած: Գիւղէն է որ կու գայ
իր ներսի կրակը:

Թէոդիկին գրած իր մտերիմ նամակին
մէջ կ'ըսէ.

«Ծնած եմ 1884ին Սեբաստիոյ մօտ
Բրզնիկ գիւղը, ուր աճած է մանկութիւնս,
ուռնիններուն տխուր հովանիններուն տակ
երազկոտ, կամ գետեզերքներուն վրայ
բազմերուն քար նետելով անառակօրէն: Դեռ
հազիւ ես թիթեռնիկներ որսալու հասա-
կիս մէջ՝ հայրս պանդխտած է Պոլիս,
իսկ մայրս ձմեռնային երկար իրիկուննե-
րը՝ թոնրատունը նստած՝ երեւակայու-
թիւնս օրօրած է ենիչէրիներու և գայլե-
րու պատմութիւններով, երբ Մէյրէգուփի
հովը կու գար բուխերիկին մէջ մերթ ոռ-
նալ և մերթ դելի ձագի մը նման լալ²»:

Իր բանաստեղծի հոգիին տարերքն է
որ կու գային ներսը խմորուիլ: Տարիներ

յետոյ ինչպէս պիտի յառնէին անոնք՝
ստեղծելու համար Սարսառներու և Յեղիկ
Սիրտիկ ամէնէն գողտրիկ բերթուածներէն
մէկը քանին:

Սաղմը Բրզնիկէն կու գար, բայց բա-
նաստեղծը կազմուեցաւ Գատըգիւղի մէջ:
Հոն էր որ մուսաները եկան առաջին ան-
գամ իր ճակտին հպիլ:

Դարձեալ ինքն է որ կը գրէ նոյն այդ
մտերիմ նամակին մէջ.

«Գիւղին դպրոցը հազիւ սկսած եմ ժա-
մագիրքը կարդալ սորվիլ՝ զիս տարած են
Պոլիս 1896ի կոտորածի օրերուն, ուր
հայրս արեան սարսափին մէջ փնտռելէն
յուսահատ՝ բանտին մէջ գտած եմ այն
տխուր օրերուն ստօրէն ամբաստանուած:
Երկու տարի յաճախած եմ Սազըզ—Աղա-
ճիի Միսիթարեան դպրոցը, յետոյ Քաղ-
կեղոնի վարժարանը՝ ուր երկար ատեն
պատանեկութիւնս երազած է ընդմէջ Մօ-
տայի ծովափին և Դուրեանի ոսկրներուն
յուսկիւտար: Արձակուրդներս ընդհանրա-
պէս անցած են հօրս քով, խաղեալ խանր,
հայ պանդուխտներու հառաչներուն և վէր-
քերու տրոփիւնին ունկնդիր»:

Վարուժան իր քնարն է որ կը լարէ, —
ջարդին սարսափը ու հառաչը պան-
դուխտներուն, գեղեցկութիւնը որ բնութե-
նէն կու գայ, ու համբոյրը՝ զոր Դուրեանին
հոգին կը զրկէ իրեն: Քանի՛ քանի՛ բեր-
թուածներ հնչած են յետոյ այս լարերուն
վրայ:

Բայց բանաստեղծը պիտի չհասուննար
թերեւս այնքան արագ ու այնքան յուռթի՝
եթէ դիպուածը իր դէմը չհանէր Միսի-
թարայ Տան ամէնէն համեստ, բայց ամէ-
նէն անուշ հոգիներէն մէկը, Հայր Արիս-
տակէս Գասգանտիւեանը, որ նոյն միջոցին
մեծաւորն էր Գատըգիւղի Միսիթարեան
դպրոցին: Ան է որ ոչ միայն ձրի դպրոց
կ'ընդունի ուսման ծառա մանուկը, այլ
և կը սկսի խմորել անոր հոգին, կ'առաջ-

1. «Բազմավէպ», 1931, էջ 492:

2. «Ամէնուն Տարեցոյցը», 1909, էջ 78:

նորդէ անոր բերթողական նախափորձերը,
ի վերջոյ յաջողցնելով անոր մուտքը Մու-
րատ—Ռափայէլէ:

Վարուժան ինքն է որ կը գրէ.

«Հայր Արիստակէս Գասգանտիւեան՝ որ
նոյն ատեն տեսուչ եղած է Քաղկեդոնի
վարժարանին՝ առաջնորդած է մանկական
նախափորձերս՝ սրբագրելով սիրահարա-
կան ոտանաւորներս, և յետոյ, 1902ին,
ուղարկած է զիս Վենետիկ, Մուրատ—Ռա-
փայէլեան, բարեւելու իր տեղը Ալիշանի
նուիրական աճիւնը»:

Ո՛հ, եթէ գիտնայիք գուրգուրանքը որով
կը լեցուէր ան ամէն անգամ երբ կու
տար հայր Արիստակէս Գասգանտիւեանի
անունը: Իր յետագայ դաստիարակներէն
ոմանց մասին վերապահումներ ունէր յա-
ճախ, բայց միայն պաշտում այս ազնիւ
մարդուն համար՝ որ իր հոգիին մէջ կրցեր
էր նշմարել կայծը, ու արծարծեր էր զայն:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ

Վենետիկն էր սակայն որ հասունցուց
արուեստագէտը: Հոն էր որ պատանին իր
աչքերը պիտի բանար արուեստին:

Սխալ չէ ըսուած թէ Վենետիկը արուես-
տագէտը կը ծնցնէ մարդուն մէջ: Նախ իր
բնութեամբը որ հոգիին հետ կը խաղայ
մարդուն՝ իր գոյներուն մշտանորոգ խա-
ղովը: Յետոյ համբոյրովը դարերուն զորս
Վենետիկը անընդհատ կը պարպէ մարդուն
մէջ, տեսիլքներ բանալով անոր: Եւ վեր-
ջապէս հպումովը արուեստագէտներուն ու-
րոնը կ'ողջունեն բեզ ամէն քայլիդ ու բեզ
կ'եղբայրացնեն:

Քաղաք մը ուր արեւը միշտ գոյն կը
փոխէ, և ուր թինթորէթթոն ու թիցիա-
նոն սփռած են իրենց ամէնէն գեղեցիկ
պատառները: Քաղաք մը ուր ամէն ինչ
երաժշտութիւն է, գոյներն ու ձեւերը, երգն
ու աղաղակները:

Վարուժան չէր կրնար խուլ մնալ այս
երաժշտութեան:

Թէոդիկին ուղղած իր նամակին մէջ կը
գրէ.

«Երկու միջավայրներ ազդած են վրաս.—
Վենետիկը իր թիցիանոյով և Ֆլանտրը՝ իր
վանտիքներով: Առաջինին գոյները և վերջ-
նոյն բարբարոս իրապաշտութիւնը յօրի-
նած են վրձինս զոր անափառութիւնն
ունիմ թաթխած ըլլալու միմիայն հայրե-
նի հողին որդան կարմիրին մէջ և իր ծո-
վածուփ արեանը¹»:

Նոյն խոստովանութիւնը նաեւ Վարդգէս
Սահարոնեանի ուղղուած մտերմական նա-
մակին մէջ.

«Ամբողջովին կը զգամ թէ Վենետիկը
ազդած է վրաս իր գոյներու, ստուերնե-
րու և լոյսերու յարափոփոխ գանձերով:
Քաղաք մը, ուր առանց պատկերի մտա-
ծել կարելի չէ...»:



Ու յետոյ Վենետիկը կարելի ըրաւ որ
հաղորդուի ան օտար վարպետներու կրա-
կին: Դժբախտ եղած են մեր զրագէտնե-
րէն շատերը. չեն կրցած իրենց հոգիին
պատուհան բանալ. իբր հորիզոն ունեցած
են հայ հէք զրականութիւնը միայն, ու
այն օտար երգերը՝ զորս դիպուածը
թարգմանած է հայ լեզուի: Խրիմեան ու
Սրուանձտեանց, Դուրեան ու Գեղամ հայ
զրքերէ զատ ուրիշ անունդ չճանչցան,
ատով՝ պահեցին իրենց ներշնչումներուն
ինքնատպութիւնը, բայց հորիզոն չունե-
ցան:

Մուրատ—Ռափայէլեան սաներէն ուրիշ
բերթոյներու պէս՝ Վարուժանի ալ տրուե-
ցաւ առաջին անգամ իր հոգին բանալ
խաղաղական վարպետներուն, նոյն իսկ երբ
դեռ դպրոցին զրասեղաններուն վրայ էր:

Հ. Սիմոն Երեմեան կը պատմէ թէ Վա-
րուժան «Վարժարանական ուսմանց շըը-
ջանին խաղացի վարժապետներէն սոր-
ված էր անոնց դասականներուն քնարե-
րութեան պերճութիւնը», իսկ ինքն է որ
յետոյ անոր խօսած է «խաղացի մտա-

1. «Ամենուն Տարեցոյցը». Կ. Պոլիս, 1909, էջ 78:

2. «Հայրենիք» ամսագիր. Պոլսէն, 1926 Յունուար:

տորական նոր շարժումին վրայ, և կը յանձնարարէր Գարտուշի, Տ'Անունցիոյի, Վիկտորիա Աղանուրի և Ատա Նեկրիի քերթուածները. Վարուժան զանոնք լրջօրէն կ'ուսումնասիրէր և կ'իւրացնէր անոնց քերթողական արուեստի բոլոր նրբութիւնները¹ :

Ուրեմի բնաւ զարմանալու չէ իտալացի վարպետներուն հետքերը շօշափելով Վարուժանի արուեստին մէջ, — մերթ իր ներշնչումներուն, և յաճախ իր գրելու ձեւին մէջ :

*
* *

Վարուժան Մխիթարեանց ուրիշ բան մըն ալ պարտական է, — անոնց գուրգուրանքը դէպի իր նախափորձերը : Շատ քիչ բանաստեղծներ իրենց սկսնակութեան մէջ այնքան սիրալիր ասպնջականութիւն գտած են՝ որքան Վարուժան գտաւ Բազմավեպի և Գեղորոշի էջերուն մէջ, իր աշակերտութեան օրերուն : Հ. Սիմոն Երեմեան որ 1902 էն ի վեր Գեղորոշին սկսած էր լոյս ընծայել Բազմավեպի կողքին՝ 1905ի հատորին մէջ հիւրընկալեց Վարուժանի Սարսաղները, ամբողջ : Երջանիկ բան է քաջալերանք գտնել առաջին յուզումներուն մէջ իսկ, ինչ որ եթէ սկսնակը վաղաժամ յաւակնութեամբ մը կը լեցնէ և կը փակէ անոր աչքերը իր բիծերուն վրայ, զայն կը խրախուսէ սակայն առաջ նետուելու : Կանխահաս քաջալերանքը երկասյրի սուր է, կամ կը շփացնէ, կամ կը զօրացնէ : Վարուժան կըցաւ շուտով թոթվել մանկական շունչը՝ որովհետեւ ինք եղաւ իր դատաւորը :

Վարուժանի երեք տարիները (1902 — 1905) Մուրատ-Ռափայէլեանի մէջ՝ զուգադիպեցան շրջանի մը երբ Ս. Ղազարի մէջ ալ կը հասուննար գրական նոր սերունդը մը, որ աւելի տրամադիր կ'երեւար գրական մարզանքներու : «Բազմավեպ»-ի էջերուն մէջ քիչ մը թարմութիւն մտաւ, աւելի նախանձախնդրութիւն դէպի նոր աշխարհաբարը, աւելի սէր դէպի գրական նութիւնը :

Վարուժան Մուրատ-Ռափայէլեան մնաց բախտաւոր շրջանի մը մէջ :

Ե. ԱԼԻՇԱՆ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՄԵՋ

Ալիշան արդէն հողն էր երբ Վարուժան ոտքը դրաւ Վենետիկ : Բայց անոր շունչը դեռ կը տիրէր վանքին ու դպրոցին մէջ : Դեռ կը կաշկանդէր մարդոց հոգիները :

Ամբողջ կէս դար Ս. Ղազարը լեցնելէ յետոյ՝ Ալիշան կը շարունակէր իր հմայքին տակ պահել մնացողները :

Վարուժան Վենետիկ կու գար Ալիշանի ծարաւով. կու գար զինովնալու անոր հպած իրերուն կախարդանքն. անոր գերեզմանէն ներշնչուելու :

Վարուժան Ալիշանի շիրմին նուիրած է Վենետիկի մէջ գրած իր առաջին քերթուածը որ միեւնոյն ատեն լոյս տեսած իր առաջին ոտանաւորն է : Այդ քերթուածին մէջ կ'ըսէ.

Քեզի եկայ՝ իբր ուխտաւոր մը յոգնած՝
Որ կը գըտնէ հուսկ փոխարէնն իղձերուն
Շիրիմ մը՝ հոն ծընրադրելու սիրտը բաց,
Եւ խոկալու, համբուրելու լոյս ածիւն : ...

Ո՛հ — Աստուած իմ — ի՛նչ ըղիղ էր ատիկայ
Որ Տիեզերքին քամեց երակը համայն.
Յենած մարդուն, ճառագայթին, խաչին վրայ,
Գըրկեց Այրին՝ զոր կը կոչեն. — Հայաստան : ...

Խօսէ, հոգւոյս շողի, յոյսի բառ մ'յետին
Թող ցայտէ գանկը՝ որ անհուն աշխարհ մ'էր —
Միթէ սափորը դատարկուած վարդաշրին
Բուրումի հետք մ'իւր կողերուն չի՝ պահեր : ...

Վարուժան Ալիշանէն ծծած է իր քերթողութեան հայրենասիրական զիծը :

Ալիշան խորհրդանշան մըն է հայ ժողովուրդի պատմութեան մէջ : Հայրենասիրութեան խորհրդանշան մը : Ուրկէ՞ կըրցեր էր այդքան կրակ լեցուիլ վանականի մը ներսը՝ հայ հողին երեսը չտեսած այդ

1. «Բազմավեպ». 1931, էջ 492.

մարդուն հոգին բռնկեցնելու համար հայրենի հողին կարօտովը, ու զայն իր մէջ զգալու համար ամէն վայրկեան : Չէ՞ք զգար հայ հողին իսկ բարախումը անոր Նաազնեբուն, Յուշիկներուն ու բոլոր միւս քերթուածներուն մէջ՝ որոնցմէ քանի մը սերունդ իր հայրենասիրութիւնը խմեց : Ու ինչ ահաւոր մտքի սլացք անորը՝ որ առանց հայ հողին հպած ըլլալու, տեղափոխական վիթխարի գլուխ — գործոցներ թողուց հայ մատենագրութեան, Սիւտանը, Այրարատը, Շիրակը, Սիսականը, որոնց բոլորին մէջ ալ հայրենի աւերակները կը խօսին իրենց հարագատ բարբառով : Ան եթէ չկըցաւ համբուրել իր պապերուն կոխած հողը, Ս. Ղազար փոխադրեց հայ հայրենիքը, անկէ աւել խմելով ու խմցնելով իր շուրջիններուն :

Վարուժան այդ մթնոլորտին մէջ շնչեց, ու այդ աւիշով լեցուց իր հոգին : Այդ աւիշն է որ կը քալէ Յեղիկ Սիրտը զարդարող իր շատ մը քերթուածներուն ընդմէջէն :

Հայրենասիրութիւնը որ Ալիշանի հոգիէն կը ծորի՝ չէր կրնար սակայն նոր օրերուն դիմանալ : Հայ հողը կը խլրտէր իր ընդերքէն ու պայքարի կը կանչէր իր զաւակները : Կարելի չէր հին յուշերով զինովնալ, ու փրփրիլ կարօտի երգերով : Ռազմի շեփո՞րը պէտք էր որպէսզի առաջնորդէր նոր հայրենասիրութիւնը : Պէտք էին նոր երգեր նոր տղաքը խանդավառելու և կռիւի դրկելու համար :

Բաֆֆին բացեր էր ճամբան՝ հերոսներ ստեղծելու համար հայ ժողովուրդի ծոցէն : Ու անոր յաջորդեր էր Ահարոնեան՝ պատմեցնելու համար միս ու ոսկոր զգեցած այդ հերոսները : Բայց հայ մարտնչումը իր երգիչը կ'ուզէր : Ու ահա կոթողեցաւ Սիւտանի մէջ՝ նոր օրերու դիցազունները շեփորելու համար : Հայ հայրենասիրութիւնն ու բանաստեղծութիւնն է որ հուն կը փոխէին :

Այդ օրերուն Մուրատ-Ռափայէլեանէն պատանի մը կը մեկնէր քնար մը շալկած : Հայ ընդվզումին ալիքը առինքնեց այդ

պատանին, ու նոր լարեր դրաւ անոր քնարին :

Սիւտանի նուիրած մեր գրական ասուլիսին մէջ, Վարուժան ինքն իսկ կ'ուրուագէր այդ նոր շրջանը, երբ այլեւս հին դարերուն կարօտովը չէր որ կրնային խանդավառուիլ նոր երգիչները, և երբ «վիշտն ու պայքարը միասին ու զուգահետ կ'ափօսէին հայրենի հողը, հայ կեանքը» :

Ու ան կը զգացնէր.

«Ալիշանէն ծիրանեփայլ մեծ ստուեր մը մնացեր էր միայն՝ որուն տակ կրնային քիչ մը երազել մեր հոգիները՝ գալիք լաւագոյն քերթողներու յոյսին կառչած» :

Արդարեւ հայ հայրենասիրական քերթողութիւնը զիմագիծ կը փոխէր, ու նոր քերթողներուն մէջ նոր հայրենիք մը կ'արթննար, այս անգամ միսով — ոսկորով, իրական յուզումներով ու խռովքներով :

Բայց ինչ որ ալ ըլլար նոր զիծը զոր կեանքը պիտի պեղէր Վարուժանի հայրենասիրութեան մէջ ալ՝ Ալիշանէն կու գար կորիզը : Ու առանց Մուրատ-Ռափայէլեան յարկին՝ դժուար թէ այդ կորիզը կազմուէր :

Զ. ԲԱԳԻՐԱՏՈՒՆԻԻ ՀԵՏՔԵՐԸ

Բազմատունին հայ գրականութեան մէջ յայտնուեցաւ պահու մը՝ երբ Էրրոպան կ'արթննար դարաւոր թմբիւրէ մը : Կը թոթվէր դասական դպրոցին կապանքները, ու կը ձգտէր նոր որոնումներու, որոնք ամբողջ դար մը պիտի տեւէին, դպրոցէ դպրոց նետուելով զինքը : Դարերով նոյն հունին մէջ օրօրուելէ յետոյ՝ մարդկային հոգին էր որ կը մաքառէր ձեւ մը զըտնելու համար :

Վաղուց սարսեր էր արդէն դասական դպրոցին հիմը՝ երբ Մխիթարեանք փորձեցին զայն վերստեղծել հայ գրականութեան մէջ : Ժամանակավրէ՛պ. ի՛նչ փոթի. հայ ժողովուրդը երբեք ալ դարերուն հետը

1. «Գրական Աստղիկներ». Զ. Աստղիկները. էջ 25.

քալած չէ. միշտ քայլ մը ետ. միշտ հեռուէն: Գրական քանի՛ քանի՛ դպրոցներ իրենց մեռնելէն յետոյ է որ հայ գրականութեան մէջ սկսած են դիրք գրաւել, ու օտար գրականութեանց մէջ վաղուց չքացած ոճերն համբաւներ յանկարծ ի պատուի սկսած են դառնալ հայ գրականութեան մէջ: Պարագանքներ անթիւ են որ պէսզի պէտք ըլլար օրինակներ թուել:

Դասական նոր փորձերը Մխիթարեաններէն կու գան հայ գրականութեան. դասական՝ ոչ անշուշտ Եւրոպայի մէջ բառին ունեցած իմաստովը. այլ իրրեւ տեսակ մը յետադարձ ճիգ, — ձկտում՝ դէպի հայ գրարար լեզուն, ու փորձեր՝ Հոմերոսի և Վիրգիլիոսի ձեւովը գրելու:

Բագրատունին էր ջահակիրը այս նոր շարժման:

Երբ 1852ին հրապարակ կը հանէր ան «Ի պէտս Զարգացելոց»ը, արդէն կը բանար ճամբան գրարարի ակունքէն ոսկի խմելու: Բագրատունիի օրերուն, արդարեւ, ապականուած էր գրուող հայ լեզուն. դէպի ժողովուրդը ձգտելու գեղեցիկ մտահոգութիւնը ռամկուծեան մղած էր գրողները. այդ գոհիկ աշխարհաբարին մէջ մեղք ունին նաեւ Մխիթարեանները՝ որոնք թատերախաղ, հանդէս, դասագիրք շարադրեցին Պոլսոյ թրքախառն ռամկօրէնով: Գոհեցնելու լեզուն գացող այդ աշխարհաբարին առթած պոգանքը հակոտնեայ ծայրայեղութեան մը մղեց շատերը: Առկէ՛ կու գան փորձերը գրարարը վերականգնանքներու: Այդ ցնորքին կռուանը Բագրատունին ինքը հայթայթեց իր հոյակապ ֆերականութեամբը՝ որ շուտով գրարարեաններուն աւետարանը պիտի դառնար: Հայ դասական լեզուն վերստեղծելու այդ ցնորական բայց շքեղ փորձը, եթէ չկրցաւ արմատ բռնել՝ հակառակ իրեն յարող տաղանդաւոր դէմքերուն, և եթէ աշխարհաբարի բնականոն զարգացման թափը խանգարեց, յաջողեցաւ սակայն թանկագին տարբեր ներմուծել նոր աշխարհաբարին մէջ՝ զայն հարստացնելով բառերու և ոճերու պաշարով որոնք պիտի նպաստէին նոր

գրական բարբառը բարձրացնելու իր մեծ վայելուչ գեղեցկութեան:

Դասական ճիգին երկրորդ ազդանշանը դարձեալ Բագրատունին ինքը տուաւ՝ երբ 1858ին մամուլին յանձնեց իր Հայկ Դիւցազնը: Ան փորձ մըն էր հայ հերոս մը երգելու Հոմերեան շունչով: Ան փորձ մըն էր մեռած լեզու մը՝ որպիսին էր մեր գրարարը՝ վերականգնանքներու: Ան փորձ մըն էր նաեւ վերստեղծելու Հայկական հին տաղաչափութիւնը, որուն գաղտնիքը Բագրատունին դարձեալ ինքը կորցեց մոռացութեան գրկէն: Ու տաղանդին ուժը, հմտութիւնը, ճարտարութիւնը և հայրենասիրութեան կրակը, իրար խառնուած, Բագրատունիի մէջ ստեղծեցին տեսակ մը նոր մարգարէ՝ որ կու գար անցեալը ոգեկոչել հին դարերու շեփորով:

Բագրատունին կուռքը պիտի դառնար շուտով Մխիթարեանց գրական սերունդին: Իր հուրքը պիտի վարակէր նախ հայ լեզուի ուրիշ վարպետ մը՝ Հ. Եղուարդ Հիւրմիւզը՝ որ Բագրատունիին ոգեկոչած հայերէնովը պիտի հայացնէր լատին և ուրիշ դասական հսկաները: Ուրիշներ, աւելի կամ նուազ տաղանդով, միշտ հոն պիտի ձգտէին, — հին փառքերը երգել հին օրերու նուագարաններով: Ս. Ղազարը տասնեակ դէմքեր կը հաշուէ որոնք այդ խանդավառութենէն հաղորդուեցան:

Բագրատունին իր հմայքը տարածեց նաեւ Ս. Ղազարէն դուրս: Ոգեւորեց ամբողջ սերունդ մը: «Բագմավէպ»ի հին հաւաքածոներուն մէջ կը յիշեմ թղթատած ըլլալ երիտասարդ Խրիմեանին գրարար մէկ քերթուածը, գրուած հայկական տաղաչափութեամբ, փառաբանելու համար Բագրատունիին բացած նոր ածուն: Հայկաբաններուն տեսակ մը Մեսիան եղաւ «Հայկ Դիւցազն»ի հեղինակը՝ որուն անունով կ'երգուէրնային հասարակ մահականացուններուն, անկէ էջեր գոց արտասանելով: «Ի պէտս Զարգացելոց»ը վարժապետներու ամբողջ սերունդի մը հաւատոյ հանգանակը եղաւ, պատնէջ՝ որուն ետին կ'ապաստանէին իրարու հետ վի-

ճելու ատեն և ռամիկները վախցնելու համար:

Բագրատունիէն կու գայ ուրեմն դասական շունչը որ վանքերուն մէջ հասունացաւ, ու վանքերուն մէջ ալ խամբեցաւ, աւաղ: Կեանքը բռնի ճիգեր չի մարսեր, ու լեզուն՝ արուեստական պատուաստը: Չքացան ժիթ դարու բոլոր փորձերը՝ գրարարը վերստեղծելու իր հին փառքովը, կամ ի նորոյ շինելու համար աշխարհաբար մը՝ մտացածին կարգ-կանոնով: Այն ու ձախէն փորձուած ճիգերը հաւասարապէս ամուլ մնացին՝ որովհետեւ անտեսելէն Մեծ քերականն ու Մեծ գրագէտը՝ որ ժողովուրդն է:

Պարտուեցաւ Բագրատունին, բայց իր հմայքը յաղթեց: Լեզուի ճոխութեան և փարթամ ոճի նախանձախնդրութիւնը այդ հմայքէն կը սերի: Ու անկէ կը սերի նաեւ ճիգը հին փառքերը երգելու, եթէ ոչ հին օրերու շեփորով, գոնէ դիւցազնական ուճով մը:

Վարուժան Բագրատունիէն ժառանգած է շունչը՝ դիւցազնական իր էջերուն մէջ:

Եթէ իր հայրենասիրութեան կորիզը Ալիշանէն կու գար՝ Բագրատունին էր որ ձեւ հագցուց անոր: Վարուժան պիտի չկարենար իր Հարձը գրել, եթէ Բագրատունին Հայկ Դիւցազնը գրած չըլլար:

Է. «ՀԱՅԿԱՉԵԱՆ ԲԱՌԳԻՐԻ»Ը

Մեր գրագէտներէն ու բանաստեղծներէն շատ քիչերը միայն հայ լեզուն հիմնապէս գիտեն: Պարագանքներ այնպէս են ըրած որ մեր գրականութեան մշակները առիթը ունեցած չեն սորվելու մանաւանդ դասական հայերէնը:

Ոչ իսկ բացած են «Հայկազեան Բառագիրք»ը, ձգելով որ ան բանասէրներուն և հայ լեզուի վարժապետներուն կալուածը և յոխորտանքը մնայ:

Նոյն իսկ մեր գրագէտներէն անոնք որոնց ոճը տիպար է գեղեցկութեան ու վայելչութեան, հոտառութեամբ միայն գիտեն Հայերէն լեզուն: Գրիգոր Զօհրապ,

Զապել Եսայեան և ուրիշներ իրենք են խոստովանած թէ երբեք ալ ուսած չեն հայ լեզուի քերականութիւնը, և թէ «դիւպուածով» է որ հայերէնը կը գրեն:

Վարուժան, հայ գրականութեան մէջ, մէկն է այն քիչերէն՝ որոնք տեղեակ էին իրենց դասական լեզուին ու անոր բառաւորներին: Կարդացած էին հայ մատենագիրները: Թղթատած էին «Հայկազեան Բառգիրք»ը:

Մխիթարեանց յարկին տակ էր որ հայ լեզուն իր գանձերը պարպեց Վարուժանի մէջ: Եթէ ուրիշ որեւէ բան չպարտի իսկ Վարուժան Մխիթարեաններուն՝ գոնէ կը պարտի իր շքեղ հայերէնը:

(Արդար ըլլանք մատնանշելու համար հոս թէ Վարուժանի քերթողական երկին մէջ Մխիթարեաններէն մնացին բառերը որոնք վանք կը հոտին: Մխիթարեանք արդարեւ իրենց մշակած գրականութեան մէջ փորձած են հայ լեզուին բառամթերքը թափել, երբեմն առանց փոյթ ընելու բոլորս որ դարերը դեր են բառերուն վրայ):

Գրական Ասուլիսին մէջ՝ զոր 1913 Սպրիլ 16ին նուիրեցին Վարուժանի «Հեթանոս Երգեր»ուն, խօսքի նիւթ եղաւ անոր լեզուն ալ, որ այն օրերուն յաճախ ծամոց էր գտարին աշխարհաբարեաններու բերնին մէջ: Գրարարախառն կը գրտնէին այդ լեզուն, և ի՛նչ խորթ բառերով ու ասութիւններով:

Տօքթ. Արմ. Բարսեղեան, որ այդ ասուլիսին մէջ խօսք առնողներէն եղաւ՝ ստանձնած ըլլալով առաւելապէս ծանրանալ Վարուժանի երկին բացասական գիծերուն վրայ, սապէս բնորոշեց անոր լեզուն:

«Վարուժանի լեզուին մէջ դուք կը հանդիպիք շարք մը անգործածական բառերու, որոնք ըստ ինքեան ո՛չ նորութիւն մը կը բերեն և ոչ ալ գեղարուեստական առանձին արժէք մը ունին: Ունի շատ մը գրարարի յատուկ դարձուածքներու ձեւեր: Եթէ ասոնց վրայ աւելցնէք նաեւ նախադասութեան մասերու անսովոր դասաւորումն ու չափէն աւելի շրջումները, այն

ժամանակ կ'ունենանք ձեր առջև լեզու մը, որ ծանր է և դժուարահասկնալի նոյն իսկ երկրորդական վարժարանի մը վերջին կարգերուն, մինչև անգամ երկրորդական կրթութեան տէր անձերու... Բաւական է երկու տասնեակի չափ բառեր հանել վարուժանի բառագիրքէն, վերջացնել զբարարաբանութիւնը, բառերու դասաւորման վրայ քիչ մը աւելի խնամք տանիլ, և ահա կ'ստացուի աւելի կանոնաւոր և միանգամայն պարզ լեզու մը¹»:

Ուրեքն Զարդարեան, որ յաջորդ խօսք առնողն էր նոյն ասուլիսին մէջ, տարբեր տեսակէտ ունէր.

«Ես համամիտ չեմ Տօքթ. Բարսեղեանի՝ երբ կ'ըսէ թէ բանաստեղծութեան մը լեզուն պէտք է անպայման ըլլայ պարզ և ժողովուրդին մատչելի: Այդ կարծիքը ոչ միայն անիրաւ է, այլ նաեւ, թող ներուի ինծի ըսել, հայհոյութիւն մը արուեստին դէմ:... Օրինակի համար, չենք կրնար պահանջել որ վարուժանի իր Հարձը՝ հեթանոսական կեանքի այդ հոյակապ էջը՝ գրէր ժողովրդական աշուղի մը լեզուովը: Գալով վարուժանի լեզուին, ան՝ Բագրատունիներու և Ալիշաններու շունչին տակ կազմուած, առատօրէն կ'օգտուի զբարարի ճոխութիւններէն, զորս գործածելու ատեն երբեմն սայթաքումն ալ ունենալէ զերծ չէ սակայն բանաստեղծը. իր նկարագրութեան մէջ երբեմն դնելով հինցած բառեր, ինչպէս յոռոյր, ոռնակաւ, խրախ, եւայլն, որոնք պատկերներուն մէջ որեւէ գեղեցկութիւն չեն աւելցնէր²»:

Իրեն նուիրուած գրական ասուլիսին մէջ իր լեզուին մասին այդ ըսուածներուն տեսակ մը պատասխան էին այն քանի մը խօսքերը, զորս վարուժան ինքն իսկ ըրաւ Սիւրբանի «Ամբողջական Գործ» ին նուիրած մեր Ասուլիսին մէջ, 1913 Յունիս 2 ին: Խօսելով Ատոմ Եարճանեանի լեզուին մասին՝ վարուժան ըսաւ.

«Մենք, ճիշտ է, հին լեզուէն առած ենք բառեր ու արմատներ, բայց բոլորովին լքած ենք անոր քերականութիւնն ու

ասացուածքին ներկայիս անհասկնալի ձեւերը: Հին լեզուն պղնձէ հանք մըն է որմէ ճաշակաւոր զրագէտը բառական տեսակէտով շատ բան կրնայ դուրս բերել, զտել, յղկել ու կիրարկել՝ վստահ ըլլալով որ իր ըրածը անհրաժեշտ ու բարեբար է: Դուք կ'ուզէք անշուշտ որ հայ ցեղը ստանայ իր նախնի կորովը, ռազմիկ նկարագիրը, ազնուական ու խրոխտ այն ապրելակերպը՝ որ անտարակոյս գոյութիւն ունեցած էր ժամանակին՝ երբ Հայութիւնը կը հնչեցնէր իր բարբառը բանակին մէջ, ռազմադաշտին վրայ, կամ կ'ոլորակէր իր լեզուին հնչականութիւնը արքունիքներու մարմարեայ սրահներուն տակ, կամ սեպուհներու դահլիճներուն մէջ՝ ուր կը տօնախմբէին «Տիկնայք փափկասուն Հայոց աշխարհին»: Եթէ կ'ուզէք անտարակոյս հայ ցեղին վերադարձնել նոյն այս նկարագիրը իր նախնիքներուն՝ ինչո՞ւ համար իր գեղեցիկ դպրութեան պիտի չվերադարձնէք նոյն այդ նկարագիրը լաւագոյն կերպով ցոլացնող լեզուին ամէնէն ուժեղ և արտայայտիչ գանձերը³»:

Յետոյ՝ աւելի շեշտելու համար իր նախանձախնդրութիւնը դէպի զբարբառեան բառագանձը, վարուժան յարեց.

«Իր (Սիւրբանի) դիւցազունները ես կարծեմ աւելի հզօր պիտի ըլլային՝ եթէ զանոնք քիչ մը աւելի հագուեցնէր զբարարի պղնձէ բովէն հանուած զէնուզարդով, մարտագոռ բառերով, յստակ ասացուածքներով: Այն ատեն պիտի տեսնէր որ նոր բառեր կերտելու ձանձրոյթին ալ տեղի պիտի չմնար այլեւս⁴»:

Տեսակ մը լեզուական հանգանակ էր աս՝ որուն ինք իսկ հաւատարիմ մնաց իր քերթողական երկին մէջ:

1. «Գրական Ասուլիսներ. Գ. Գ. վարուժանի «Հեթանոս երգեր»ը. էջ 37.

2. Անդ, էջ 41-42.

3. «Գրական Ասուլիսներ. Զ. Ատոմ Եարճանեան» էջ 32-33.

4. Անդ, էջ 34.

Ը. ԿԱՆՏԸ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՄԷՋ

Յօդուածի մը մէջ՝ որ առաւելապէս նպատակ ունի Միւթարեանց դերը ճշտել վարուժանի քերթողական երկին մէջ՝ անշուշտ տեղը չէ ծանրանալ այն բոլորին վրայ զոր վարուժան Միւթարեանց կը պարտի:

Բայց դժուար ալ է Ս. Ղադարէն եկող ազդեցութիւնը որոնել բանաստեղծին վրայ, առանց ընդգծելու դաստիարակութիւնը զոր ան ստացաւ նոյն այդ Միւթարեանց շունչին տակ կամ անոնց շրջանին:

Նախ Պոլսոյ մէջ: Բըզնիկէն եկող պատանին ո՞վ գիտէ ինչ պիտի ըլլար խաւար խանին անկիւնը՝ ուր իր հայրը կ'ապրէր, եթէ բախտը զինք չձգէր Միւթարեանց գիրկը նախ անոնց Սազըզ-Աղաճի (1896-1898), և յետոյ Գատրգիւղի կրթարանին մէջ (1898-1902): Հոն է որ իր առաջին մենտորը՝ Հ. Արիստակէս Գասգանտիլեան պիտի «առաջնորդէր իր մանկական նախափորձերը՝ սիրահարական ոտանաւորները սրբագրելով» հազիւ 17-18 տարու Դանիէլին:

Յետոյ վենետիկի մէջ: — Ինչ պիտի ըլլար պատանի վարուժանը Պոլսոյ մայթերուն վրայ, 1902ին, երբ Համիտի թաթը կը ճգմէր հոգեկան ամէն թուիչը, եթէ Միւթարեանց վենետիկ չղրկէին զանիկա: Վենետիկն էր որ իր հոգին գոյնով ողողեց:

Վարուժան Միւթարեանց կը պարտի մանաւանդ իր համալսարանական կրթութիւնը: Պեւծիքան իր վերջին դաստիարակը եղաւ: Հոն խորացուց իր հոգին:

Հ. Սիւրբան Երեմեան, որ վարուժանի քայլերուն գուրգուրանքով հետեւած է Մուրատ-Ռափայէլեանի մէջ իսկ և չէ զլացած իր հոգածութիւնը անոր, կը պատմէ թէ զիւրին չեղաւ համալսարանական թուշակ մը ապահովել վարուժանին՝ որովհետեւ ան ամբողջովին լրացուցած չէր հարցերն լիկէտնական շրջանը, և վարժապետին օրէնքներուն դէմ էր թռչակ սահ-

մանել իր քննութիւնները չանցընող սանի մը: Սակայն «զարտուղի տաղանդի երեւոյթ մըն էր վարուժանը, որով շատ իրաւացի էր զարտուղութիւն մ'ընել անոր»: Ու Հայր Սիւրբան Երեմեան կը պատմէ իր զիմուսները վարժարանին մեծաւոր Հայր Ստեփան Սարեանի մօտ, որուն դիտել տուած է թէ «մեր վարժարանը սկիզբէն մինչեւ ցարդ ոչ մէկ զրագէտ համալսա-



Դանիէլ վարուժան Ուսամող Կամտի մէջ
Պրն. Գառնիկ Գլըճեանի հետ (1908)

րանական տուած է ազգիս և թէ զրագէտ համալսարանական մը վարժատրելը ազգային զրականութիւնը վարժատրել է», փաստերով ցոյց տալով որ «վարուժանին մէջ ծնած էր արդէն այն մեծ տաղանդը՝ որուն համար սահմանուած բացառիկ թուշակ մը, փառքի տոկոսովը կը վերադառնայ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի պատմութեան մէջ յաւերժօրէն ապրելու»:

Հ. Սիւրբան Երեմեանի պատմածէն կ'իմանանք դարձեալ որ իր և Հայր Ստեփան Սարեանի ջանքերուն շնորհիւ հնարաւոր եղած է ի վերջոյ բացառիկ կարգադրու-

Թիւն մ'ընել վարուժանի համար: Ան կը ղրկուի Պելճիքա, Կանտի համալսարանը, — փոխանակ Լոզանի՝ զոր կը նախընտրէր վարուժան, — ուր կը հետեւի մէկ կողմէ գրականութեան դասերուն, և միւս կողմէ քաղաքական և տնտեսական գիտութեանց դասընթացներուն, 1905—1909:

Հետո մեզմէ այն միամտութիւնը թէ համալսարանական կրթութիւնն է որ արուեստագէտի մը հոգին կը կերտէ: Ինչ արուեստագէտներ եղած են, — բոլոր ազգերու մէջ ալ, — որոնք իրենց հոգին ճիշդ լեւով է որ փառքի հասած են՝ ոչ թէ համալսարաններու գրասեղանները մաշեցնելով. և փոխարէն ուրիշան դուռններ ելած են համալսարաններէն:

Բայց Կանտի շնորհիւ ընդհանուր զարգացման տէր մտաւորական մը մտաւ հայ գրականութենէն ներս: Ու այդ մեծ բան էր գրականութեան մը համար՝ ուր գրողները հասարակ վարժապետութենէ կը սերին, մտքով ու զարգացումով գրեթէ բոլորի:

Աւելին: Կանտն էր որ լար մը եւս աւելցուց վարուժանի քնարին վրայ: Աւելի ճիշտ երկու նոր թելեր՝ որոնք յետոյ պիտի թրթռային իր Հերակուս Երգերուն մէջ. — Մարդկային Տառապանքը և Կարօտը Հին Դարերուն: Արդարեւ բազմաթիւ են իր այն քերթումները զորս Պելճիքան իրեն ներշնչեց և որոնց մէջ ան կ'երգէ դարը իր նեխանքով ու դիրտով, իր տքնութեամբն ու տառապանքովը: Ընկերավարական գիծն է որ կը շեշտուի այդ քերթումներուն մէջ, — համամարդկային տեսիլքներով բռնկած ըմբոստը: Ու զգուանքը զոր կը զգայ ամէն քայլին այս աշխարհը գիտելով, պժգանքը մարդոցմէն ու իրերէն՝ իր մէջ կ'արթնցնեն ծարաւը հին դարերուն՝ երբ գեղեցկութիւնն է որ կը պաշտուէր և վայելքը:

Ու իր «Հեթանոս Երգեր»ուն հիմնական այս երկու գիծերը ան կ'ուզէ իրաբոլ շաղախել, — «Ես կ'երգեմ կեանքը յանուն հաճոյքի և տառապանքի գեղեցկութեան»:

Կանտն էր վերջապէս որ իր հոգիին մէջ նոր գիծ մը բերաւ, — յոռետես գիծը, որ երկար ատեն պլլուած մնաց անոր սրտին, իր դրոշմը դնելով Հերակուս Երգերուն քանի մը քերթումներուն վրայ ալ: Վարուժան 1907 օգոստ. 18 թուակիր նամակի մը մէջ զոր Կանտէն գրած է իր բարեկամ Դերենիկ Ճիզմէճեանին², կը պոռթկայ իր մեղամտեղութիւնը.

«Ահա թէ ինչ պայմաններու հասած եմ որուն ամենէն ահաւորը միայն կրնամ լիովին քեզի ըսել: Տխրութիւն, մտատանջութիւն, ճանձրոյթ և յուսահատութիւն, ահա բաժինը երիտասարդ հասակիս: Վիճակ մը ցիրուցան, միշտ գերազգուծած, ժամեր կ'ունենամ, որ ես իմ թշնամիս կը դառնամ, ես ինձմէ գրեթէ կը սոսկամ. եթէ այսպէս շարունակուի, ես ինձի հետ գէշ պիտի լինեցունեմ: Փորձեցի սրտի կսկըծումներս մոռնալ գրելով, արտադրելով քանի մը բանաստեղծութիւն, ամբողջ թոյն, ամբողջ լեզի կարծես, ցաւերուս մէջ թաթախուած էջեր. եթէ կ'ուզես հոս կը դնեմ քանի մը տող ըստ դիպուածի քերթում մը՝ որուն խորագիրն է «Նիրվանայի Հորը»: Դատէ՛, բաղդատէ, Դանիէլը զոր ճանչցար, Դանիէլիդ հետ զոր կորսնցուցիր: Տես թէ ալ ինչ կէտի հասեր է այս անիծեալ կեանքը՝ զոր կը յուսամ թէ շատ երկար ատեն պիտի չկրեմ ու ահա.

«Ո՛չ ոք, ո՛չ ոք գիտէ վիշտն՝
Որ թոքերուս մէջ գերդ խաշխաշ թունաբեր,
Կ'աճի արագ. ո՛չ ոք գիտէ թէ ինչ կերպ
Յուսահատութիւնն օրէ օր գիտ մահուան հետ
Կ'ընդելացնէ, թէ կ'երթամ ինչ ճամբայով
Կեանքիս մոխիրն ես իմ ափիս մէջ կըշռել:
Մահկանացու նայուածքներու վարագոյր
Պիտի ըլլայ սարգի ոստայնը՝ զոր ես
Լուրթեամբ հոգեւոյս աւերին վրայ կը հիւսեմ:
Դու գիտես լոկ ահաւոր վերջս, ո՛վ լուսին,
Որ հորին մէջ տըրտմամթախի՞ծ կը ժպտիս
Եւ գիտ քեզի կը կանչես:

1. Հ. Սիմոն Երեմեան, «Դանիէլ վարուժան ինքնակենսագիր», Բազմալեզու, 1931, էջ 493-494.

2. Անդ, 1931, էջ 496-498.

Դու գիտես լոկ թէ ինչ հողով թունաւոր թրքումած է բաժակն այն՝
Որով կեանքըս խմելու եմ սահմանուած»:

Այս քերթումն էր որ նոր խմբագրութեամբ մը յետագային պիտի երեւար Հերակուս Երգերուն մէջ:

Պելճիքայի մէջ իր ուսանողութեան շրջանը խոր ազդեցութիւն թողուցած է այսպէս անոր քերթողութեան վրայ: Ինքն իսկ կը բնորոշէ այդ ազդեցութիւնը մտերմական այն նամակին մէջ զոր Պոլսէն գրած է վարդգէս Ահարոնեանին 1914 Մարտ 26ին. —

«Ձեզի ծանօթ ըլլալու են աննպաստ պայմաններու մէջ գտնուող հայ ուսանողի մը բոլոր տառապանքները, նիւթական ու բարոյական արկածախնդրութիւնները: Կրնամ ըսել, թէ ամենէն խոր անձնական տառապանքները ես կրեցի Կանտի մէջ: Սակայն, 1904—1907 շրջանն էր, երբ հայութիւնը կը խեղդուէր սուրի ու սովի մղձաւանջին մէջ. ու ես չուզեցի տեղ տալ իմ անհատական ցաւերուս. գրեթէ բոնի լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել Յեղիկ Սիրտը, որուն բախիւնները կը զգայի իմ մէջս, իմ սեփական արիւնիս խորը: Հայութիւնը կու լար ու կը մոնչէր իմ մէջս և երգերս զուրս կու գային օտար երկնքի տակ կարօտի լարովը միայն կապուած մեր երկրի հոգին և մարդուն հետ:

«Սակայն, տեսած էի Եւրոպան: Օգտուելով տեղւոյն հսկայ գրադարաններէն՝ կարդացեր էի Հնդկներէն մինչեւ Հոմեր, ու Հոմերէն մինչեւ Մէդէրլինք: Հոգիս վրայ բոցի մը լեզուին պէս զգացած էի բանուորներուն ազազակները մէկ կողմէն, ու միւս կողմէն շուայտ ու արեւոյդ կեանքը, ի զուր թագնուող բողբոջները բաւոյիկ համարուած փարթամ ընտանիքներուն: Եւ ահա ասոնք բոլորը՝ ստորագծուած յիշողութեան մէջ և միացուցած հին յունական ու հռոմէական կեանքին վերյիշումներուն, յանգեցայ գրել, երբոր երկիր, իմ գիւղս վերադարձայ, Հերակուս Երգերը¹»:

Հայ գրականութիւնը Կանտին պարտական է «Հեթանոս Երգեր»ը, ու Կանտը՝ Մխիթարեաններուն:

Թ. ՀՈԳԻԻ ԿԱՊԸ

Ու հիմա, վերջացնելու համար:

Տարիները կ'անցնէին, ու իր սիրտը միշտ ալ կապուած մնաց Մխիթարեանց օճախին:

Անոնք որ իր մտերմութեան մէջ ապրեցան՝ գիտեն արդարեւ գուրգուրանքը զոր ան միշտ ալ տածեց դէպի Մխիթարայ յարկը: Երախտագէտ նախկին սանի մը զգացումը չէր միայն որ կը պահուրտէր այդ գուրգուրանքին մէջ. ան հպարտ էր այն առաքելութեան համար զոր ստանձնած էին Մխիթարեանք հայ ժողովուրդի ծոցին մէջ:

Մեր պարապոյ ժամերուն՝ յաճախ կը խօսէինք վանքին մասին, երբ մանաւանդ Ահարոնն ալ ըլլար: Աւելի ճիշտ՝ վարուժանը ինքը կը խօսէր, պատմելով վանքէն ու դպրոցէն:

Ո՛հ, անցեր է արդէն մօտ քառորդ դար մը, ու ի վիճակի չեմ վերյիշելու իր տպաւորութիւններն ու դատաստանները բառը բառին: Բայց միշտ պիտի յիշեմ իր գուրգուրանքը Ս. Ղազարու ամէնէն պատուական դէմքերէն մէկուն՝ Հ. Յովհաննէս Թորոսեանի մասին, որուն բարի սրտին ու լայն հոգիին կը զմայլէր, ու կ'ափսոսար որ այնքան ժլատ է եղած ան իր մտաւոր գանձը պարպելու համար:

Հ. Սիմոն Երեմեանը կը սիրէր զաւկի մը ու եղբոր մը խառն գորովով: Հպարտութեամբ կը յիշէր որ ան իր սկսնակի առաջին քայլերուն քաջալեր է եղած, և իր ընթերցումները ուղղած՝ մտերիմ խօսակցութիւններու մէջ:

Հ. Արսէն Ղազիկեանին պաշարին, տըքնութեանը ու համոզման բարեկամութեանը կը զմայլէր, Հ. Եսայի Տայեցիին՝ բարութեանն ու սրամտութեանը, ու Հ. վար-

1. «Հայրենիք» ամսագիր, 1926, Յունուար:

դան Հացունիի փոշիններէն զգացած հա-
ճոյքին վրայ: Կը զգար որ բան մը պար-
տական էր Հ. Ստեփան Սարեանին, ու անոր
անունը երախտագիտութեամբ կու տար:

Բայց մանաւանդ պաշտամունքով կը
յիշէր առաջին օրերու իր դաստիարակը:

Ինչպէս խօսած եմ այլուր¹, հայր Ա-
րիստակէս Գասգանտիլեանն էր այդ դաս-
տիարակը, Տրապիզոնցի Միթիթարեան մը,
որ պատանի Դանիէլի մէջ դրած է գե-
ղեցկութեան սէրը ու անոր հասնելու
քաղցրութիւնը: Յայտնի անուն մը չդար-
ձաւ այդ վարդապետը, բայց Վարուժան
կը պատմէր թէ ամէկոտ բանաստեղծ մը,
կար այդ մարդուն հոգիին խորը, ու շըր-
թունքներուն վրայ մեղր ու բարութիւն:
Այնպէս քաղցր ու տպաւորիչ էին իր ըն-
թերցումները, որ իր աշակերտներուն հո-
գիին մէջ բան մը կը ձգէին իր անուշ
ձայնէն ու կայծ մը հեղինակներէն զորս
կը կարդար անոնց: Կը պարտկէր իր բա-
նաստեղծի հոգին, վախճալով թէ երգը,
որ շրթունքներուն կու գայ, չի պատմեր
հոգւոյն խօսածը: Բայց կը սիրէր հայա-
ցնել օտար գեղեցկութիւններ. իրն է թարգ-
մանութիւնը Ինչպէս Տերեւեղը երկին, ու
հայր Արսէն Ղազարեանէն առաջ ինք է
եղած Ատա Նէկրին սիրովն ու թարգմա-
նողը: Բայց մանաւանդ ան գիտէր որոնել
գեղեցկութիւնները որոնք ուրիշին մէջ կան.
կը սիրէր փնտռել ծածկուած գեղեցկու-
թիւնները. ինք եղած է պատանի Դանիէ-
լին մէջ լոյսը գտնողը. ոչ միայն գտած
է գոհարը, որ իր հոգւոյն մէջ կը կրէր
Բրգնիկէն եկած այդ անտաշ տղեկը, այլ
ձեւ ու գեղեցկութիւն տուած է անոր. ինք
է որ սրբազրած է այդ տղուն առաջին
ճիշերն ու հեւքերը, — սիրահարական տա-
ղեր բոլորն ալ:

Գիտեմ մանաւանդ իր խանդավառու-
թիւնը գրական նոր սերունդին համար
որ հասակ կը ցցէր Ս. Ղազարի մէջ: Գրա-
կան նոր մտայնութեամբ թրծուած դէմքեր
էին զինք ոգեւորողները՝ որոնք Բագու-
վայի մէջ սկսած էին պահ մը թարմ շունչ
բերել, ու գրական մտահոգութիւն երբեմ-

նի բանասիրական նախանձախնդրութեանց
տեղ: Մասնաւորապէս երկու նոր դէմքեր
էին զինք խանդավառողները, որոնք մեծ
խոստումներով սկսան՝ ի վերջոյ կանխա-
հաս զոհերը դառնալու համար բախտին,
մէկը մեծ եղեռնին խողխողութեամբ Տրա-
պիզոնի մէջ, ու միւսը իր հոգեկան հա-
ւասարակշռութեան մը շանթահար:

Ինչպէս այլուր գրած եմ², Հայր Ներսէս
Անդրիկեան էր անոնցմէ մէկը: Մշեցի այս
երիտասարդ վանականը նոր լոյս մը կը
կրէր իր հոգիին մէջ: Զինք չհասկցողնե-
րուն աչքին, ճիշտ է, գծէն ելած մըն էր
ան, բայց Վարուժան կը հիանար նոր ճի-
զին համար զոր գտած էր անոր. մէջ: Փո-
շիններու պաշտամունքին ու տառերու չոր
ուսմունքին տեղ՝ ան մէջը կը կրէր գե-
ղեցկութեան ծարաւը: Քանի մը պզտիկ
երկեր միայն ունի ան: Ուսումնասիրու-
թիւնը մըն է անոնցմէ մէկը, «Գեղեցիկը
չեղա՞նք մէջ», Բագուվայի մէջ ցանցնուած:
Երկրորդը վիպակ մըն է, առանձին հա-
տորով ալ տպուած, Հանգած Եկեղեցին,
կրելով իրր հեղինակի անուն՝ «Մեկտիտի
Երեկոյի» ի հեղինակը բառերը միայն:
Չհասկցուած, տգոհ, մենամուլ, ի վերջոյ
խախտած իր հոգիին խաղաղութիւնը, այս
վանականը թողուց սքեմը: Զինադա-
րին Պոլիս տեսայ զինքը՝ երբ մտացրիւ
տէրվիշի մը նման կը թափառէր փողոցը:
Յետոյ իմացայ թէ հոն ալ մեռեր է՝ իր
տառապած հոգին հանգչեցնելու համար
հողին տակ:

Երկրորդը Հայր Կարապետ Տէր-Սահա-
կեանն էր, ան ալ Մշեցի, գիտնական ու
բանաստեղծ միեւնոյն ատեն: Իբրեւ գիտ-
նական շատ քիչ երկեր թողած է այս
երիտասարդը, «Հայ Կայսերք Բիզանդիո-
նի», քանի մը յաջող ուսումնասիրութիւն-
ներ հայ հին մատենագիրներու վրայ, և
Փրանսերէն աւարտաճառ մը «Շարպարիան
Արեւիք»-ի մէջ, զոր գրեւ էր Ֆրիպուրկի

1. «Գիծեք Գաւիէլ Վարուժանի կեանքէն», «Հայրե-
նիք» ամսագիր, 1923, Նոյեմբեր, էջ 34:
2. Անդ:

համալսարանը աւարտելուն առթիւ: Բայց
մանաւանդ համակրելի էր իր մէջ բա-
նաստեղծը, որ յաճախ կը պահուրտէր
Արամայիս ու Արտաշատի Հեղեհաւեր ա-
նուններուն տակ: Չկրցաւ սակայն թոխչը
տալ իր տեսիլքներուն, ու հորիզոն բա-
նալ բանաստեղծի իր հոգիին. ոչ իսկ ա-
ռիթը տրուեցաւ իրեն՝ իր ձեւը գտնելու:
Բայց այն քանի մը էջերը՝ զորս կը թո-
ղու՝ չեն կրնար մոռցնել որ այս համեստ
վանականը եղաւ: Վարուժանի տունը
ճանչցայ զինքը 1913ին երբ Տրապիզոն
կ'երթար իբր դաստիարակ: Հայաշինչ
եղեռնը զինքը հոն գտաւ ու խամրեցուց
զայն հագիւ 33 տարու:

Արդար չէ՞ր որ պրպտած ատեն Վա-
րուժանի հոգիին կապերը Ս. Ղազարի
հետ, տայի այսպէս անունը չաւարտած
երկու եղբայրներու, զորս Վարուժան միշտ
կը յիշէր խանդաղատանքով:

Ու նաեւ կարգը կու գար դպրոցի գրա-
սեղաններուն, եղբայրներու՝ որոնց հետ
նոյն տեսիլքները ապրած էր, և որոնք
յետոյ պիտի երթային մոռցուիլ տարբեր
ասպարէզներու մէջ: Իր դպրոցական մը-
տերմութենէն կը յիշէր Գերենիկ Ճիգմէ-
ճեանը և Գարեգին Տիրակերեանը, ու կ'ափ-
սոսար որ անոնք կապ չունեցան հայ գրա-
կանութեան հետ: Կը յիշէր աւելի կրտսեր-
ներ ալ, որոնք դպրոցին մէջ կայծ մը
ցուցուցին ու շուտ մը մարեցան դուրսը:
Ինձ խօսած է Յովսէփ Գարապաճաքեանի
մասին, որ յուսատու ծիլ մը եղած էր,
բայց խամրած շուտով: (Ո՛րքան քաղցր է
եղած ինձ համար տարիներ յետոյ Նաա-
սարդի մէջ լոյս ընծայել քանի մը գողտրիկ
կտոր, Յովսէփ Սեւեան ստորագրութեամբ,
այդ նոյն Յովսէփէն. թեքեանը՝ որ կար-
դացեր էր զանոնք՝ ինձի կը գրէր այն
ատեն իր կրած շատ հաճելի տպաւորու-
թիւնը այդ քերթուածներէն): Վարուժան
աղապատանք ունէր մանաւանդ դէպի Ա-
հարոնը, որ իրմէ յետոյ Մուրատ — Ռա-
փայէլեան եղեր էր, և որ նոյնպէս Բա-
զրատունիէն ու Ալիշանէն աղուոր կայծ
մը խմած՝ հայ նոր քերթողութեան տուեր

էր ձեւով կատարեալ շատ մը քերթուածներ:
Վարուժանի մէջ հին կապերը միշտ
ամուր մնացին այսպէս:

Երբ 1913ին «Նաւասարդ» տարեգրքին
կը ձեռնարկէինք մէկ տեղ՝ իր գլխաւոր
ճիգը եղաւ Միթիթարեան գրական սերունդն
ալ համախմբել մեր շուրջը: Ու իր ջան-
քերուն շնորհիւ էր որ աշխատակից ու-
նեցանք Հ. Արսէն Ղազարեանը, Հ. Սի-
մոն Երեմեանը, Հ. Կարապետ Տէր Սա-
հակեանը, Հ. Յարութիւն Աստուրեանը:
(Մտքէն իսկ չէր անցնէր թէ այն քանի
մը մոլեռանդները՝ որոնք չէին հանդու-
ժեր իր գտնուելուն Ս. Գրիգոր Լուսաւո-
րիչ ուսումնարանին գլուխը, խժեռանքի
նիւթ պիտի ընէին Միթիթարեաններու աշ-
խատակցութիւնը... անհաւատ Վարուժա-
նի մը տարեգրքին):

* * *

Ահա ինչ որ կրնայի ըսել եղբարբախտ
բարեկամիս մտքի և հոգիի կապերուն մա-
սին Միթիթարայ Տան հետ: Ափյափոյ
զրուած այս քանի մը էջերը թող համեստ
ծաղիկ մը ըլլան այն գեղեցիկ փունջին
մէջ՝ զոր ազգը կը դնէ այսօր յորեւեար
դպրոցի մը ճակտին, իբր առհաւատչեայ
իր երախտագիտութեանը: Ո՛հ, երախտա-
գէտ է նաեւ հայ քերթողութիւնը, որուն
այնքան փառքեր եկան այդ կրթարանէն,
սկսեալ Սրապիոն Հէքիմեանէն՝ որ, միջակ
իր բանաստեղծ՝ բայց հայ բեմին հիմերը
պեղեց, Մկրտիչ Պէշիքթաշլեանէն՝ որուն
քնարին հայրենի լարը և գրաբար քեր-
թուածներուն քնքշութիւնը Միթիթա-
րեաններէն կու գայ, Մկրտիչ Աճէմեանէն
որ իր օրերուն սիրուեցաւ, թովմաս թէր-
գեանէն՝ որ, ծագումով կէս մը օտար՝
հայացաւ Միթիթարեանց շունչին տակ և
որուն քերթուածներուն մէջ մեծ քնարե-
գակ մը պահուրտած է, մինչեւ Դանիէլ
Վարուժան՝ որ պսակեց Մուրատ — Ռա-
փայէլեան իր երգերուն փառքովը, մին-
չեւ Ահարոն, մինչեւ այն նոր տղաքը՝
որոնք ծլեցան ու դեռ կը ծլին Միթիթա-
րայ հովանիին տակ:

Պուրբէշ, 1936 Օգոստոս

Յ. Ճ. ՍԵՐՈՒՆԻ